

Հավելված

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

«31» 08 2020թ.

N 63 հրամանի

ԿԱՐԳ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈւՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԿՐԹԱԹՈՇԱԿԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնասպորտային համալիր» հիմնարկի հանրակրթական դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) սովորողներին ամենամյա «Գազպրոմ Արմենիա» կրթաթոշակի տրամադրման մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման հետ կապված հարաբերությունները:
2. Մրցույթը կազմակերպվում և անցկացվում է տարին մեկ անգամ, որի նպատակն է խրախուսել Դպրոցի սովորողների բարձր առաջադիմությունը և խթանել նրանց մտավոր, ֆիզիկական և հոգևոր ակտիվությունը:
3. Մրցույթն անցկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո, ոչ ուշ քան հաջորդ ուսումնական տարվա սկիզբը:
4. Սույն կարգը հաստատվում է, դրանում փոփոխություններ և լրացումներ են կատարվում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ հրամանով:

II. «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Մրցույթը կազմակերպում և անցկացնում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնասպորտային համալիր» հիմնարկի հրամանով ձևավորված մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):
6. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աշխատակազմի և «Ուսումնասպորտային համալիր» հիմնարկի համապատասխան աշխատողներ:

7. Հանձնաժողովի գործունեության կարգը (աշխատակարգը) հաստատվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի հրամանով:

III. «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

8. Մրցույթին կարող են մասնակցել Դպրոցի 3-11-րդ դասարանները ավարտած բոլոր այն սովորողները, ովքեր ամբողջ ուսումնական տարվա ընթացքում հանդիսացել են Դպրոցի սովորող և ունեցել են 9.0 և բարձր միջին գնահատական: Թեկնածուների առաջադրումն իրականացվում է համապատասխան հայտերի միջոցով՝ էլեկտրոնային (առցանց) ձևաչափով (հայտի ձևը հաստատում է Հանձնաժողովը):

9. Մրցույթի հաղթողի ընտրությունն իրականացվում է հետևյալ փուլերով՝

1) բարձր կամ գերազանց առաջադիմություն (միջին գնահատականը՝ 9.0 և բարձր) ունեցող սովորողների ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին Հանձնաժողովի անունից ուղարկվում է էլեկտրոնային հայտարարություն Մրցույթի անցկացման, պայմանների և ժամկետների մասին.

2) մրցույթին մասնակցելու (որպես թեկնածու առաջադրվելու) համար սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը, սահմանված կարգի համաձայն, պետք է ներկայացնի համապատասխան հայտ և անհրաժեշտ փաստաթղթեր.

3) մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնած և հայտը ներկայացրած սովորողները Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում կմասնակցեն ընդհանուր գիտելիքների ստուգման թեստին, այնուհետև՝ հարցազրույցի Հանձնաժողովի հետ:

4) նշված չափանիշների՝

ա) ուստարվա միջին գնահատական (25%),

բ) ընդհանուր գիտելիքների ստուգման թեստի արդյունք (50%)

գ) հարցազրույցի արդյունք և աշակերտի կրթության, սպորտի կամ արվեստի բնագավառներում ակնառու հաջողություններ և ձեռքբերումներ՝ հավաստող փաստաթղթերի առկայությամբ (25%),

հիման վրա Հանձնաժողովը կընտրի «Գազպրոմ Արմենիա» կրթաթոշակի տրամադրման մրցույթի հաղթողներին:

10. Հաղթող են ճանաչվում յուրաքանչյուր դասարանական հոսքում (տվյալ դասարանի բոլոր դասարանական խմբերը միասին) 9.0-ից բարձր լավագույն/ամենաբարձր արդյունք ցուցաբերած սովորողները՝ յուրաքանչյուր դասարանական հոսքից առավելագույնը երեքական սովորող:

11. Մրցույթի հաղթողները կստանան «Գազպրոմ Արմենիա» կրթաթոշակ՝ 600,000 ՀՀ դրամի չափով՝ գալիք ուսումնական տարվա ուսման վարձի փոխհատուցման նպատակով: Կրթաթոշակը կտրամադրվի յուրաքանչյուր կիսամյակից առաջ, երկու հավասար մասերով՝ 300,000-ական ՀՀ դրամի չափով:

12. Գալիք ուսումնական տարվա 1-ին կիսամյակում 9.0-ից ցածր միջին գնահատական ունենալու դեպքում՝ կրթաթոշակ ստացողը կզրկվի 2-րդ կիսամյակի կրթաթոշակից:

13. Նույն դասարանական հոսքում մրցույթի հաղթող(ներ)ի և հաջորդ լավագույն երկու սովորողների վերջնական արդյունքների միջև մինչև 0.05 միավոր տարբերության դեպքում վերջիններս ևս կստանան կրթաթոշակ՝ 300,000 ՀՀ դրամի չափով՝ գալիք ուստարվա ուսման վարձի փոխհատուցման նպատակով: Կրթաթոշակը կտրամադրվի յուրաքանչյուր կիսամյակից առաջ, երկու հավասար մասերով՝ 150,000-ական ՀՀ դրամի չափով:

14. Գալիք ուսումնական տարվա 1-ին կիսամյակում 9.0-ից ցածր միջին գնահատական ունենալու դեպքում կրթաթոշակ ստացողը կզրկվի 2-րդ կիսամյակի կրթաթոշակից:

15. Այն սովորողները, որոնք չեն ստացել «Գազպրոմ Արմենիա» կրթաթոշակ, սակայն ուսումնական տարվա ընթացքում ունեցել են կրթության, սպորտի կամ արվեստի բնագավառներում ակնառու հաջողություններ և ձեռքբերումներ, կարող են ստանալ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի դպրոցի կրթաթոշակ՝ 250,000 ՀՀ դրամի չափով՝ գալիք ուսումնական տարվա ուսման վարձի փոխհատուցման նպատակով:

Սույն կետում նշված կրթաթոշակի տրամադրման կարգը հաստատվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի հրամանով:

16. Սույն կարգի դրույթները կիրառվում են սույն կարգով սահմանված կրթաթոշակի համար «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից համապատասխան գումարներ նախատեսված լինելու դեպքում և այդ գումարների սահմաններում: